ՆՈՐ-ԴԱՐ

№ 119 ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ Երեքշաբթի 25 Յուլիսի 1889 Երեքշաբթի 25 Յուլիսի ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 119

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ., ամիսը՝ 1 ր., հատով 5 կոպեկ։
Բաժ մնորդ. գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների գնաին 2 կ., բեկլամների համաը կրկնապատիկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հեռագրներ։
Քրոնիկան. Լ'օրբեր։
Քաղաքական.—Քաղաքական լուրեր։
Խառն լուրեր։
Երեկոյեան հեռագրներ։
Բանասիրական. — Ֆրանսիական մայրաքաղաքից։
Տնդեսական.
Յայտարարութիւններ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԴՈՐՏԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 յուլիսի.—Հրատարակուած է պետական խորհրդի որոշումը նաւթային լուսատու իւղերից վերցուղ ակցիզի մասին և որոշուած են Բագուի և Բաթումի շրջանների սահմանը՝—առանց ակցիզը գրաւականով ապահովելու նաւթային պահեստները ակցիզային հսկողութեան տակ դնել ցանկացող նաւթատէրերը պարտաւոր են կէս տարուայ համար առաջուց ներկայացնել 300 րուբլի՝ առաջին 5,000,000 պուդ իւղն առաջին անգամ ընդունելիս և 300-ական րուբլի հետեւեալ ամեն մի 5,000,000 պուդի համար։ Նաւթային լուսաւորող իւղերը թոյլ է տրւում Բագուի շրջանից արտահանել Կասպից ծովով՝ Պարսկաստան և միջին-ասիական վաճառականները՝ միմիայն կանխօրէն ներսից ակցիզը վճարելով կամ վճարը գրաւականով ապահոված ընդհատամամբ վճարելով։

Մաքսատներում գրաւականը լրացնելու և մաքսային տուրքերը վճարելու համար ֆինանսների մինիստրը յուլիսի 1-ից մինչև հոկտեմբերի 1-ը նշանակել է արծաթէ րուբլիանոցի համար բանկային փող՝ 70 կ. ոսկով, մի րուբլիանոց թղթադրամի և արծաթէ ու պղնձի մանր փողի համար—65 կ. ոսկով։

ՊԵՏԵՐՀՈՖ.—Այսօր ժամը 4-ին տեղս ժամանեցին Ջերնօգօրիայի իշխան Նիկօլայը, ժառանգ Դանիէլը, Մեծ Իշխան Պետր Նիկօլաևիչը և Ջերնօգօրիայի իշխանադուստր Միլիցան և Անաստասիան։ Երկաթուղու կայարանում բարձրաստիճան հիւրերին դիմաւորեցին Նոցին Կայսերական Մեծութիւնները, Թագաժառանգը և Կայսերական տան միւս անդամները։

Մեծ Իշխան Կոնստանդին Նիկօլաևիչի հոգեկան գրութիւնը խաղաղ է. սննդառութիւնն լաւանում է. կաթուածային երևոյթներն անփոփոխ են. շնչառութիւնն աւելի կանոնաւոր է։

Գլխաւոր շաբը ի նկատի ունենալով, որ մարզական զինուորակոչի միջոցին շատ զինուորներ խոյս են տալիս ժողովատեղին գալուց, բացատրում է, որ մինչև մի ամիս տևող մարզական զինուորակոչի չեկողներից յանցաւորները ենթարկուում են առաջին անգամ 3 ամսուայ կալանաւորութեան, կամ մինչև 1 տարի 4 ամսուայ քաղաքային բանտում արգելման. երկրորդ անգամ—4 տարուայ բանտարկութեան. երրորդ անգամ—Սիբիրում աքսորի։

ԼՕՆԴՕՆ.—Գերմանական կայսրն երէկ երեկոյեան պատերազմական 10 նաւերով անցաւ Դուվրի մօտով և այսօր, ճաշից յետոյ, կը մտնէ Պօտսմուտին, ուր նրան կը դիմաւորէ Ուէլսի պրինցը։

Թագուհին Վիլհելմ կայսրին բրիտանական ամբողջ նաւատորմիղն պատուոյ ծովակալ նշանակեց։

Կ. Պօլսից «Times»-ին հեռագրում են, որ Բալկան թերակղզում ծագած խճճումների պատճառով Ֆ. Դուռը հրամայել է 80,000 պահեստի զինուորներից զէնքի կոչել։

Անգլիան ձեռք բերեց Սամօա կղզուց դէպի հիւսիս գտնուած Ունիօն և Ֆելիկս կղզիների խմբակները։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 յուլիսի.—Երէկ, Թագուհու Կայսրուհու անուանակոչութեան օրը, բոլոր եկեղեցիներում գոհաբանական մաղթանքներ կատարուեցան։ Մայրաքաղաքը գեղեցկօրէն զարդարուած էր և երեկոյեան լուսաւորուած։ Պետերհոֆում Արքայական Ընտանիքը ներկայ էր պատարագին, որից յետոյ շնորհաւորութիւնները ընդունեցան և նախաճաշ կազմեցին։ Ծամը 3-ին Մեկլենբուրգ-Շվերինեան մեծ հերցոգի և ամուսնու ընդունելութիւնը եղաւ։ Երեկոյեան սպիտակ ընդունարանում ընտանեկան ճաշկար, իսկ առևտրական գահլիճում—մինիստրների ճաշ։ Ստորին պարտէզները, մանաւանդ «Մօն-Պլեզիր»-ը հիանալի լուսաւորած էին։ Տօնախմբութիւնը վերջացաւ փառաւոր հրաւառութեամբ։

ԼՕՆԴՕՆ.—Աթէնքից «Բէյտերի գործակալութեան» հեռագրում են, որ Կանէայի շրջակայքում տաք կռիւ է պատահել։ Ապստամբները ստիպուած էին նահանջելու։ Ծովովուրդը մեծ յուզման մէջ է։

ՊԱՐԻԶ.—Բարձրագոյն ատեանը պիտի կայանայ օգոստոսի 8-ին, նոր տումարով։

ԼՕՆԴՕՆ.—«Բէյտերի գործակալութեան» երէկուայ թուով հեռագրում են. «գեներալ Բրինֆէլն այսօր յարձակուեց դերվիշների վրայ, Ջարդեց և բոլորովին փախուստ դարձրեց նրանց։ Դերվիշների պարագլուխ Վադէլ-Նիումին սպանուած է։ Դերվիշների կորուստը հասնում է 1500 հոգու. եգիպտական զօրքերի կորուստն աննշան է։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱՆ

21 Յուլիսի 1889 թ.։

Լօնդօն 96,95 ր., 96⅛ ր., 96,90 ր.
Համբուրգ 47⅛ ր., 47,20 ր., 47,45 ր.
Պարիզ 38,52 ր., 38,45 ր., 38⅛ ր.
Պօլուխվարեալ . . . . . 7 ր. 74 կ. սակ.
Մաքս. կուպօն . . . . 155 ր. — կ. սակ.
Սրծաթ . . . . . 1 ր. 11 կ. սակ.
Բրօսային դէս . . . . . 5⅝ և 7⅛
Պետակ. բանկի 5⅛ տոմս.
1-ին շրջանի. . . . . 99 ր. — կ. սակ.
2-րդ . . . . . 98 ր. 62 կ. գն.
3-րդ . . . . . 99 ր. — կ. սակ.
4-րդ . . . . . 98 ր. 62 կ. գն.
5-րդ . . . . . 98 ր. 62 կ. գն.
6-րդ . . . . . 99 ր. — կ. գն.
Ոսկէ փոխառու-
թիւն 1889 թ. . . 141 ր. — կ. գն.
4⅛ տոմսեր . . . . . 83 ր. — կ. գն.
100 և 1000 ր. արևելեան փոխառութեան
5⅛ տոմսեր,
1-ին շրջանի . . . . . 99 ր. — կ. սակ.
2-րդ . . . . . 98⅛ ր. — կ. գն.
3-րդ . . . . . 98⅛ ր. — կ. սակ.
Առաջին 5⅛ նեբբեն փո-
խառութեան
տոմսեր . . . . . 263⅛ ր. — կ. գն.
2-րդ . . . . . 244⅛ ր. — կ. գն.
5⅛⅛ երկաթը . . . . . 103 ր. — կ. ծախ.
Ոսկէ երկաթ 1883 և 1884 թ. 178 ր. — կ.
և 154⅛ ր. սակ.
Թիֆ. քաղ. վարկի ընկերը.
օբլիգ. . . . . 84⅛ ր. — կ. ծախ.
Բօրսային արժադրութիւնը թոյլ է։

(Երեկ. հեռ. չորրորդ երես.)

ՔՐՈՆԻԿՈՆ

Շաբաթ, 22 յուլիսի, Նորին Մեծութիւն Կայսրուհի Մարիա Ֆէօդօրովնայի անուանակոչութեան օրը, պատարագից յետոյ հանդիսաւոր մաղթանք կատարուեց Վանքի աւագ եկեղեցում, նոյնպէս Սիօնում և մահմեդական մզկիթներում։

Ճանկարծ ամբոխը խռնուեց, բաղուխներ բարձրացան օդի մէջ, բոլորն իրար անցան, ոստիկանութիւնն վրայ հասաւ։ Շէվլոց և ծափահարութիւն իրար խառնուեցան... Բայց այդ միջոցին լուեց ուսանողների «Ой фпе́йте хасѣкъ է ժամ» Ֆրանսիական հիմնը, բուլանժականներն անհետացան։ «Vive la France», «Vive la République» աղաղակի հետ զանազան պատգամաւորութիւններ թափօրով մօտեցան միմեանց ետևից և ղբօչակները խռնարհեցնելով, պաշտօներ դրին արձանի պատուանդանի վրայ... Նրանց մէջ էին նաև Էլզաս-Լօթարինգիայի կողմից մի քանի պատգամաւորներ, որոնց վրայ սակայն օրուայ այդ միջադէպը շատ վատ տպաւորութիւն էր գործել.—որքան չլինի, նօ էլի արիւնները գերմանական է, անսովոր են այդպիսի անհերքելի երևոյթների։

Բուլանժականներն, ինչպէս լսեցի, այդ տեղից փախչելուց յետոյ, մի քանի տեղ կրկին փորձ են արել ժողովուրդն աղմկելու համար։ Բայց ոստիկանութիւնը, որ այդ օրուայ աւելի աւելացրած էր, ամեն տեղ կարգը պահպանում է...

Մինչ այս, մինչ այն, Longchamps-ը լցւում է բազմութեամբ. զօրագունդերը հաւաքւում են բիւրաւոր ամբոխը ճեղքելու։ Բոլոր ծառերը ծածկուած էր բազմութեամբ... Բոմմ... որոտաց յանկարծ թնդանօթը—այդ հասարակապետութեան նախագահն է գալիս Պարիզի նահանգապետի, գեներալ Սօսիէի և ուրիշ բարձրաստիճան անձերի հետ։ Անվերջանալի «կեցցէ»-ներին խռնարհ գըլխի չարժումն էր պատասխան լինում Կարնօյի կողմից։ Պարիզի նահանգապետը չորեքի սպաներն և օտար պետութիւնների զինուորական ներկայացուցիչների հետ՝ առաջից և ետևից սուա-

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՑՐԱՔԱՂԱՔԻՑ

Զ. Նամակ

Պարիզ, 4 յուլիսի.

—

—Վաղն արդէն մերն է. չեմ կարծում, որ ո և է պատրուակ ունենաք մեղանից անկատ ժամանակ անցկացնելու,—նկատեց օրիորդ Rose-ը քաղցր ժպիտը երեսին և զուարթ հայեացքով վրաս նայելով, երբ առաւօտեան սուրճ ձեռին նեղս մտաւ սեղանատունն, ուր նախընթաց օրուայ ընկերական կեր ու խումից յետոյ վաստակաբեկ նստած թերթում էի «Figaro»-ն։

—Շնորհ արէք օրիորդ, ձեր խոնարհ ծառան եմ, եթէ այդ ձեզ՝ հաճոյք կը պատճառէ...։

—Ա՛յ այժմ ճանաչում եմ իմ հին բարեկամին,—մէջ մտաւ պառաւը.—Թէև վաղուան օրը ծննդեան առիթ չունիմ ես, մանաւանդ որ դա իմ գաղափարներիս թաղման օրն է, բայց չեմ ուզում անմասն մնալ, երբ ընդհանուր երկիրն ուրախանում է...—Եւ պառաւը մի ծաղր ալ քաշեց, ով գիտէ, ինչեր անցան նրա մտքից։

Այս փոքրիկ խօսակցութիւնն իմ և տանտիրուհիներիս մէջ տեղի ունեցաւ յուլիսի 1-ին, չաբաթ օրը, այսինքն ֆրանսիական յեղափոխութեան ամենանշանաւոր դէպքերից մինի—Բաստիլի առման հարիւրամեակի նախընթաց օրը։ Ամբողջ Ֆրանսիան իւրաքանչիւր տարի մեծ չուքով ծօնում է այդ օրը՝ յուլիսի 2-ը, բայց այդ ծօնախմբութիւնն առաւել մեծ հանդէսով կատարուելու էր այս տարի՝ 100 ամեակի օրը։ Պառաւս, որ հին բօնապաշտական էր, անչափածում էր այդ օրը, որովհետև դա նախադուռն էր այն «զժբաղդութիւններին», որոնք վիճակուեցան Ֆրանսիային Խեղճ պառաւ. նա անհամբեր էր, թէ ինչպէս իր դաղափարակից զինուորների չարքը տակաւ առ տակաւ նօսրանում է՝ բաղմացնելով «ատելի» հասարակապետականների բանակը, որից ի միջ ցաւ նրա սրտին, զինուոր էր գրուած նաև իր աչքի լոյս միակ Rose-ը։ Եւ ահա, խեղճ պառաւը, իր մայրական սէրը հակադրելով դաղափարներին, սարսափած էր խիղճն ուժգնել և աղջկայ հետ միասին եռադունեան հասարակապետական-ազգային դրօշակներով զարդարել իր տունը և տան պատուհաններին փակցնել R. F. (République Française) սկզբնատառերը, որ իր հարազատ աղջիկն էր պատրաստել։

Յուլիսի 2-ին Ֆրանսիայի մայրաքաղաքն առանձին չարժման մէջ էր։ Դեռ նախընթաց օրուանից քաղաքի բոլոր պալատները, տները, խանութները, հիւրանոցները, փողոցները, ծառուղիները, արձանները զարդարուած էին Ֆրանսիայի հասարակապետական-ազգային եռիք գոյն՝ կարմիր-կապոյտ-սպիտակ դրօշակներով, որոնք փողփողում էին երեկոյեան մեղմ հովիկի առաջ։ Ֆրանսիայի մարմնացեալ պատկերացման արձանիկները՝ պահակիր դեղադէմ նորատի կիներ, զարդարած էին նշանաւոր պատուհանները՝ նրանց կից փակցրած R. F. նշանատառերի հետ, դուսաւոր՝ կարմիր-կապոյտ-սպիտակ լապտերները խառն հազարդունեան կանթեղների հետ, չար ի չար կախած էին ամեն տեղ, ուր որ հնար էր եղել։ Ամեն կողմ տիրում էր կենդանութիւն, իրարանցում,—երիտասարդութիւնն արդէն կատարում էր մեծ օրուայ նաւակատիքը café-ներում, փողոցներում, հրապարակներում։ Ամեն կողմից լսելի էր լինում կաղրիլի, պօլկայի, վալսի, ոստնապարի նուագները. մի քանի տեղեր էլ երիտասարդութիւնը կերտնակիր թափօրներ էր կատարում։ Բայց այս ամենը դեռ նս, այսպէս ասած, փորձնական ծօնակատարութիւն էր։ Պարիզի մեծ մասն անդամն էր գրած՝ ապատելով յաջորդ օրուան։ Սպասում էին, որ մայիսի 5-ին, այսինքն աշխարհահռչակ բացման օրուայ նման արևաչատ օր էր լուսանալու։ Երկաթուղու կայարանները, որտեղ նոյնպէս չքեղօրէն զարդարուած էին, լցուած էին ահագին բազմութեամբ. ամեն մի գնայք իր հետ հաղարաւոր հանդիսականներ էր բերում Ֆրանսիայի գաւառական քաղաքներից. գալիս էին և օտար երկիրներից՝—Բելգիայից, Զուիցերիայից, Գերմանիայից (իսկապէս Էլզաս-Լօթարինգիայից), էլ չեմ յիշում ուրիշ հեռաւոր երկիրներից եկողների դունդերը, որոնք իսկապէս գալիս էին աշխարհահռչակ տօնի համար։ Նկատելի էր, որ Պարիզից հեռացողների բազմութիւնը չատ նուազ էր համեմատելով նախընթաց օրերի գնացողների հետ—աչխարհանդէսին հազարաւոր այցելուներ, որոնք ամեն օր և անդադար վերադառնում են հայրենիք նոր եկողներին տեղ տալու համար, յատուկ մնում էին յուլիսի երկուսին էլ Պարիզում լինելու համար...։

Պարիզը, որ սովորաբար միչա վաղ առաւօտեան ոտքի վրայ է լինում, այժմ սովորականից կանուխ զարթնած խուռներամ բազմութեամբ լցուած էր փողոցներում, հրապարակներում Place de la Concord, Champs Elisés, Բուլօնեան անտառը, Longchamps։ Ման գալու հնար չկայ։ Կառաչք և օրիորդներն զուգած են թեթև գլխարկներով. միայն անծանօթ քրտինքն է, որ առուակներ կազմուելով, ակօսներ է ձգում նրանց սիրուն քոնքերի չալարների միջով... Ջնայելով մերթ ընդ մերթ տեղացող անձրևներին, հասօնական նկարներով զարդարուն հովարները չարժուում են անընդհատ... Անձրևանոցները ջուր են կորուսել... Օմնիբուսների, այլ և այլ կառքերի երթևեկութիւնն համարեա զադարած է։ Սենի վրայ վխտացող բազմաթիւ ամեն ձևի և մեծութեան չոփեռնաւերն ու նաւակները զարդարուած են չքեղ կերպով և լցուած են խուռն բազմութեամբ... Սակայն բոլորի նպատակն էլ Longchamps-ն է.—մեծ հանդէսն այնտեղ է լինելու։

Համաձայնութեան հրապարակը երիտասարդութեան ժողովատեղն է. այնտեղ, Ֆրանսիայի նշանաւոր քաղաքների արձանների մէջ Սարասրուղի սպասպատ արձանն ընդհանուրի ուշադրութեան առարկան է դարձել։ Հայրենասէրների Միութիւնը՝ բուլանժական յայտնի գործիչների, մանաւանդ Դերուլէդի առաջնորդութեամբ, Ֆրանսիայի յայտնի ընկերութիւնները, ընկերակցութիւնները, ուսանողական խմբերի և օտարազգի հրիտասարդութեան պատգամաւորների, մի քանի էլզաս-լօթարինգիայիներից բոլորը խմբուած են հզօր Գերմանիայի ձեռքում «դերի» եղող Ստրասբուրգի արձանի չուրջ։ Հայրենասէրների Միութիւնն, որ ամեն տարի հանդիսաւոր թափօր էր կատարում այդտեղ, ընդհանուրի համակրութիւնն իր հետ ունենալով, այս տարի փորձեց հանգամանքից օգտուելով բուլանժականների օգտին ցոյց անել։ Նրանցից մինը արձանի վրայ դրեց պակ և Դերուլէդը բարձրացաւ որ խօսէ... Ի՞նչ ասաց—չլսեցի։

Ներկայումս Ֆրանսիայում կան 1589 թուականից մնացած 6 հատ միայն ֆրանսերէն ձեռագիր Աստուածաշունչներ, որոնցից մէկը գտնւում է Փարիզի Ազգային գրադարանում։ Այդ ձեռագրի վերջում գրիչը յիշատակարանի մէջ ասում է, որ նա գրել է այդ Աստուածաշունչը 1589 թուականին Ֆրանսիայի թագաւոր Հենրիխ IV-ի օրով։ Ձեռագրի մէջ կան շատ հետաքրքրական նկարներ, որոնք ներկայացնում են Հին Կտակարանի տեսարանները։ Ձեռագրի ամենագեղեցիկ նկարը Ադամի և Եւայի արարումն է։ Ադամը ներկայացուած է պառկած, իսկ Եւան՝ կանգնած։ Ադամի գլխի վերեւում կանգնած է Աստուած, որ ձեռքը դրել է Եւայի գլխին։ Ադամի ոտքերի մօտ կանգնած է Սատանան, որ ներկայացուած է մարդու գլխով, իրանը՝ օձի, ոտքերը՝ առիւծի։ Ձեռագրի մէջ կան նաեւ Նոյեան տապանի, Աբրահամի զոհաբերութեան, Յովսէփի պատմութեան, Մովսէսի, Դաւթի, Սողոմոնի, Դանիէլի, Յովնանի, Եսթերի, Յուդիթի, Տոբիթի, Մակաբայեցիների եւ ուրիշների նկարները։ Ձեռագրի վերջում գրիչը յիշատակարանի մէջ ասում է, որ նա գրել է այդ Աստուածաշունչը 1589 թուականին Ֆրանսիայի թագաւոր Հենրիխ IV-ի օրով։ Ձեռագրի գրիչը յիշատակարանի մէջ ասում է, որ նա գրել է այդ Աստուածաշունչը 1589 թուականին Ֆրանսիայի թագաւոր Հենրիխ IV-ի օրով։ Ձեռագրի գրիչը յիշատակարանի մէջ ասում է, որ նա գրել է այդ Աստուածաշունչը 1589 թուականին Ֆրանսիայի թագաւոր Հենրիխ IV-ի օրով։

Ներկայումս Ֆրանսիայում կան 1589 թուականից մնացած 6 հատ միայն ֆրանսերէն ձեռագիր Աստուածաշունչներ, որոնցից մէկը գտնւում է Փարիզի Ազգային գրադարանում։ Այդ ձեռագրի վերջում

օժանդակութիւնից, սակայն այժմ աւելի պէտքեր ունենալով, ինչպէս վերը յիշեցի, ուրեմն և աւելի էլ առատօրէն օգնելու էք ձեր նուէրներով. չէ որ այդ ամենը ձեր զաւակների մարդավայել բարեկեցութեան համար են...»: Սրանից յետ երկտող դպրոցների աւագ ուսուցիչ Բ. Մելքեանցը խօսեց ուսման նշանակութեան մասին. ապա խօսքը մանաւանդ դարձնելով աղքատիկ դպրոցների դրութեան վրայ, յայտնեց ծնողներին այն անուշադրութեան մասին, որով ուսանողները (մանաւանդ տղայք) չատ անգամ են յաճախում դպրոցները, որից յետոյ ուսումնական հաշիւը կարգաց. աղակերտները ստացան վկայականներ առաջադիմութեան թուանշաններով. հաչուից երևեցաւ, որ ամեն բաժանմունքից առնուազն ³/₄-ը փոխադրուել էր հետևեալ բաժանմունքը, իսկ չորս օրիորդներ՝ Յովսէփեանց Աննա, Մինասեանց Աննա, Բաղդասարեանց Վարվառէ և Նազարեանց Վարվառէ ստացան աւարտման վկայագրեր. Այդ ամենից վերջ հանդիսականները նայեցին ի ցոյց արուած օրիորդների նուրբ և գեղեցիկ ձեռագործները, որոնց համար չատ աւելի դասեր էր պարապած դաստառն իր պարտականութիւնից դուրս. չատերը վերցնելով նրանցից կամենում էին գնել, բայց երբ ձեռագործութեան ուսուցչուհի տ. Մելքեանցը յայտնում էր, թէ հոգաբարձութիւնը վիճակախաղի մտադրութիւն ունենալով չէ վաճառում, ցած էին գնում. Երկտող աչակերտների երգեցիկ խումբը մի քանի աղգային երգեր երգելուց յետ, ստացաւ բաժին քաղցրաւէնիք, նոյնպէս և չերպողները: Ժողովուրդը յայտնելով իր գոհունակութիւնը դպրոցների կառավարիչներին, ցրուեցաւ ուրախ տրամադրութեան ներքո:

—

Հինգշաբթի, յուլիսի 20-ին, Վանքի աւագ եկեղեցու մօտերքը խեղդուեց Ա-լէքսանդրապոլցի մի մարդ—Ղազար Սիմոնեանց:

—

ԲԱԳՈՒԻՑ.—Ի ցոյց հասարակութեան հանդէս են գրուած Մալխասեանի խաղերի լուսանուագում Դանիէլ Ղազեանցի փայտի վրայ քանդակած վեց հատ նոր բաւականի մեծ պատկերները հետաքրքիր տեսարաններով. նա պիտի ուղարկէ Թիֆլիսում ներկայ տարում կայանալիք ցուցահանդէսը: Այդ պատկերներից մի քանիսը վեր է առել այն մօդելներից, որը Բագուի հասարակութիւնը, և նաև արդիւնաբերողները, Թագաւոր Կայսրը Բագուն ժամանելիս, քանդակագործուած պատկերներով արծաթի ափսեների վրայ աղ ու հաց են մատուցել: Պրանցից առաջինը ներկայացնում է Բագուն՝ նկարուած ծովեզրի կողմից, երկրորդը Բալախանի նաւթահանքի հորերն է, որոնցից մէկի չարուանը ցայտում է դուրս. կան և տեղական սայլ, ի միջի այլոց կայ այդ պատկերներից Հայաստանը, Վէնետիկը, Նաւթալանը և կրակապաշտների աղօթարանը: Մենք չատ ենք տեսել այդ պարոնի ուրիշ համանման քանդակները, բայց վերջիններն իրենց դեղարուեստի նրբութեամբը և չնորհով գերազանցում են նախկիններին:

—Յուլիսի 14-ին նահանգական դատարանում քննուում էր մի հետաքրքիր գործ: Այս անգամ դատարանը գործ ունէր մի 15-ամեայ Ֆեդրով ազգանունով մալական պատանու հետ: Ֆեդրովը ծառայելիս է եղել տեղիս դրասենեակներից մէկում. օգտուելով տիրոջ բացակայութիւնից, նա մի կերպ բաց է անում գրասեղանի արկղը, վեր է առնում բանկի չէկային տետրակը, կարում է մի չեկ, նշանակում է 4000 րուբ., ստորագրութիւնը կեղծում և մարտի 13-ին առնում Թիֆ. առ. բանկը՝ փողերը ստանալու: Բանկային կառավարիչը կասկածում է ստորագրութեան իսկականութեան մասին և տեղեկութիւն է հարցնում հեռախօսով վերոյիշեալ դրասենեակից: Ձդութիւնը յայտնուեց յետոյ, անմիջապէս ձերբակալում են փոքրիկ յանցաւորին, որը խոստովանում է իր յանցանքը: Դատարանը քննելով ճշմարտութիւնը, վճիռ կայացրեց, բայց յանցաւորը լինելով անչափահաս՝ դատապարտեցին միայն 4 ամսուայ բանտարկութեան:

—

Եղբ. Նօբէլների ընկերութիւնն այս տարի 3000 րուբլի են նշանակել մի ֆօնդ կազմելու համար, որը, «Нов.»-ի ասելով, հիմք կլինի վախճանած ծառայողների ընտանիքներին նպաստող ֆօնդին:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—

ԹԻՒՐՔԻԱ.—Հետագային արդէն հաղորդեց, որ Թիւրքիան մտադիր է հեռագրական դաշնակցութեան հետ միանալու. Թէև այդ լուրը նոյնպէս հեռագրով հերքուեցաւ, բայց և այնպէս լրագրները գրաւած են այդ խնդրով, որովհետև ապագայում առաջանալիք վճռական գործառնութիւնների մէջ ոյն ծանրակչիռ նշանակութիւն պիտի ստանայ Թիւրքիայի բռնած դիրքը և նրա գինուորական ոյժը: Բայց ոյնքան է Թիւրքիայի պատերազմական զօրութիւնը, որ տարէց տարի աճում է և կատարելագործում զերմանացի հմուտ մարգիչների ձեռքի տակ:

Թիւրքերի հետևակ բանակը բոլոր իր առանձնութիւններով, իր արժանիքներով և թերութիւններով արդէն լաւական յայտնի եղաւ վերջին պատերազմի միջոցին մանաւանդ: Թիւրքիայի զօրքի արժանիքը պայմանաւորուած էր, առաւելապէս նրա ազգային և կրօնական առանձնութիւններով, որոնք կարող էին թիւրք զօրքերի ահարկու բանակ կազմել, եթէ պետութեան ընդհանուր գինուորական կազմի անբաւարար կազմութիւնը չլիներ: Մինչև այժմ այն կարծիքն էր տիրապետում, թէ պատերազմական արուեստի մէջ ունեցած տգիտութիւնը, վատ հրամանատարութիւնը, մեծ մասը ոչ թէ քաղաքական յանցաւորներ, այլ և հասարակ յանցագործներ չէին լինում, այլ բանտարկում էին կամ աքսորում՝ լոկ այս կամ անձի հետ ունեցած ընտանեկան, անձնական, մասնաւոր անհամաձայնութիւնների, կուսակցութիւնների համար: Այսպէս օրինակ հռչակաւոր Վօլտէրը երկրորդ անգամ Բաստիլ մտաւ ապակտոր-Լօհանի, իր անձնական թշնամու չնորհով, որին Վօլտէրը մենամարտի էր կանչել, բայց lettre de cachet սոացաւ որպէս հրաւիրագիր Բաստիլ մտնելու: Այդ դաղտնի հրամանների միջոցով միևնոյն տիրապետող կուսակցութիւնը կամ անձը—մինիստրները, եղբայրները ազատօրէն գործածում էին նրան իրենց հակառակորդ, նոյն իսկ ամենատմիդ, բայց վտանգաւոր ճանաչուած անձերին ոչնչացնելու: Մի ժամանակ բարոյականութիւնն այնքան ընկած էր Ֆրանսիայում, որ յայտնի առևտուր էին անում այդ «lettre»-ներով, ինչպէս այժմ բօրսաներում արժեթղթերով. Փողովուրդը, նրա ներկայացուցիչները, չատ դիւրով, յայտնի մարդիկ բողոքեցին նրա դէմ, թագաւորներից խընդրեցին ոչնչացնել այդ բանը, բայց հին կառավարութիւնը բաւական զօրեղ էր իր ամենազօրեղ ղէնքերից մինը ձեռքից բաց չթողնելու համար: Ֆրանսիական կառավարիչներն այնքան սովոր էին դրան, որ կարծում էին, թէ առանց դրան կառավարել անհնար է. Պատմութեան մէջ, ինչպէս կը յիշէք, որպէս օրինակ յիշուած է կարդինալ Ֆլէօրի մինիստրութիւնը, որ 17 տարուայ ընթացքում քառասուն հազար lettre de cachet էր բաց թողել: Օրէնք, քննութիւն չկար: Շատ անգամ պատահել է, որ երկու հակառակորդներ, lettre de cachet-ներ ձեռք բերելով, երկուսն էլ միաժամանակ պատահել են բանտում, կամ մինը դուրս գալիս՝ միւսն է նստում նրա տեղը: Կատարեալ կամայականութիւն էր տիրապետում:

Բաստիլում բանտարկում էին նաև նրանք, որոնք համարձակուում էին ենթադրութիւններ դէմ ձայն բարձրացնելու յանդգնութիւն ունենալու. Այսպէս օրինակ, Բրետոնի պարլամենտի աւագ-դատախազ դը-լա-Շալօտտը եղբայրների դէմ հրատարակած իր մի դրուածքի համար իր որդու հետ բանտարկուեց Բաստիլում և յետոյ աքսոր ուղարկուեց: Վօլտէրը իր մի դրուածքի համար նոյն բերդում արդիլուեց, ուր երկրորդ անգամ էլ իր անձնական թշնամիների ջանքով ընկաւ: Եղբայրների ուսումնարանի մի աչակերտ իր ուսուցիչների մասին դրած մի ոտանաւորի համար քսանեմ տարի Բաստիլում նստելուց յետոյ, միայն իր ահագին հարստութիւնը եղբայրների օգտին նուիրելով ազատուեց: Խէ կալօնիանկաններով խօ Բաստիլիան լցուել էր: Շատ անգամ պատահում էր, որ բանտարկուածները մոռացուում և մինչև մահ մնում էին Բաստիլում. օրինակ մի երիտասարդ համարձակուել էր իր ժամանակուայ ֆինանսների մինիստրութեան մէջ քննել—նա բանտարկուեց և մոռացուելով մինչև մահ մնաց բանտում, թէև յիշեալ մինիստրն արդէն վաղուց պաշտօնանկ էր եղել և նրա մէջ քօղը փոխուել: Մի ուրիշ երիտասարդ, որպէս զի իր մի նշանաւոր գիւտի գաղտնիքն ուրիշներին չկարողանայ յայտնել, բանտարկուեց և մոռացուեց բանտում. Շատերը խելագարուում էին երկարատև բանտարկութիւնից. Սովամահ անել, ամենասարսափելի տանջանքներ հասցնել, բանտարկեալից փող կորզելու համար ցուրտ և խոնաւ պետնայարկերում տանջել, ծարաւ պահել, մարմնական պատիժներ տալ — ամենասովորական վատ կազմակերպութիւնը և այլն այսպիսի հանդամանքները թիւրք լաւ գինուորներն արդէն որ կը լինին այսուհետև ևս զօրեղ բանակ կազմելու. Ներկայ գինուորական դիւրութեան պահանջներով կրճատած, մարզուած և կազմակերպուած զօրքերը, պէտք է որ չատ բարձրից մակիկ անէին թիւրքերի զօրքերի վրայ. Սակայն Նորին Կայսերական Մեծութիւն Սուլթան Համիդ-խանի ջանքերով, թիւրքերի զօրքերը կամաց-կամաց սովորում են և աջողութեամբ ձեռք են բերում և բերել են այն առաւելութիւնները, որով օժտուած են լաւ կրճատած զօրքերը: Թիւրքական նոր գինուորական կազմակերպութեան սխալմը խիստ անբաժան ամրողջութիւն է կազմում. Այլ ևս զօրքի գործառնութիւնների մէջ պատահականութիւնը բարձրած է, ամեն ինչ խիստ չրջանակի մէջ է առնուած, ամեն ինչ իր նըշանակութիւնն ունի և եթէ պատերազմի ժամանակ ամեն ինչ խիստ կանոնաւորութեամբ չընթանայ, ինչպէս խաղաղ ժամանակը, բայց և այնպէս մօտիկ անգն ալում կատարուած անկարգութիւնների մասին խօսք անգամ չի լինիլ:

Մի քանի հրապարակախօսներ կարծում են, որ Թիւրքիան հեռապատահական դաշնակցութեան չի միանալ՝ գինուելու համար և արևոր ծախքերից խոյս տալով: Ցամաքային զօրքի կազմութեան մէջ մտնում է 20 տարեկան և ամեն տարի գինուորակոչի մասնակցում են բոլորը, ով որ ընդունակ է ծառայելու, բացի խիստ սակաւաթիւ անձերից, որոնք ընտանեկան հանգամանքներով ազատ են մնում գինուորակոչից: Միջոցներ են ձեռք առնուած, որպէս զի բոլոր գինուորականութեան մէջ ծառայելու ընդունակ մարդիկ գինուորական կրթութիւն ստանան: Օրի զօրաբաժիններ կազմում են խաղաղ ժամանակուայ բանակը, որը միշտ աւելի կազմութիւն ունի, քան թէ իսկական չափն է, այնպէս որ այժմ բանակում եղողների թիւը 200,000 է: Այդքանով չբաւականանալով, կառավարութիւնը վճռել է Կ. Պօլսի, Ադրիանուպօլսի, Մոնաստիրի, Էրզրումի, Դամասկոսի զօրաբաժինները պատերազմական դրութեան մէջ դնել: Պիտի կազմակերպուին նոր չորս զօրաբաժիններ և 10 գունդ հեծելազօր՝ Կովկասի սահմանների վրայ. Ռմբարձիք գունդը լրացնելու համար պատերազմի միջոցին ունին 352 զօրաբաժին (բատալիօն) բերդից, որոնց կազմակերպութիւնն մօտերքս վերջացաւ. վերջապէս մուսահպիզը պիտի կազմակերպէ 384 զօրաբաժին, որ նշանակուած է բերդերը, ամրութիւնները պաշտպանելու և զործող զօրքի պահասորդը լրացնելու համար. Պատերազմի միջոցին թիւրքական զօրքը կը հասնի 1,000,000 հոգու, այսինքն բոլոր ժողովրդի 5%-ն է կազմում:

Թիւրքերի հետևակ զօրքը պինդամ է պահեստաւոր նոր ձևի և չափի հրացաններով. ամրաձիգ գնդերն արդէն մատակարարուած են Կրուպպի թնդանօթներով. պինդարական-նեվեզեղինի պատչերը եռանդով լրացնում են. Թէև զօրքերի կրթութիւնը առաջադիման անբաւարար են, բայց և այնպէս խիստ նկատելի են լինում այդ կողմից եղած առաջադիմութեան քայլերը. Թիւրքերի զօրքերը ատացել են զերմանական կանոնադրեր և զրաղում են զաչտային մարզութիւններով: Անկասկած մեծ նշանակութիւն ունի, վերջապէս, այն հանդամանքը, որ թիւրքերի զինուորական չաբի սպաների ուսումնարաններում և սպաների մէջ տարէց տարի աւելանում է հետաքրքրութիւն դէպի զինուորական գրականութիւնը և օր ատուր աւելանում են այդ գրականութեան մէջ յայտնի հեղինակութիւնների թիւրքերէն թարգմանութիւնները: Ընդհանրապէս պէտք է ասել, որ թիւրքերի բանակը սկսել է իրագործել զերմանական զինուորական հաստատութիւնների ոչ միայն արտաքինն, այլ և ոգին ի հարկէ, այդ քայլերը ծանր են առաջ գնում, մանաւանդ կազմակերպութեան աւերից նրան և մի քանի տարի յետոյ հիմնայատակ կործանից:

Ինչ ասել կուզէ, որ 1789 թուի ապստամբութիւնը՝ Բաստիլի դէմ տածած զայրոյթից չատ աչքացաւ միայն. դա միայն մեծ յեղափոխութեան մի մասն էր, որը որպէս մարմնացած արձան անիրաւութեան, իր վրայ հրապիրից ժողովրդի զայրոյթը, որ դարերով հատաքում է նրա սրտում վատ կառավարիչների չնորհիւ երկիրը բաղդանդիներին խաղալիք դառնալուց:

Բաստիլի առումն մեծ տպաւորութիւն գործեց ոչ միայն ամբողջ Ֆրանսիայի, այլ և ամբողջ Եւրոպայի վրայ:

1789 թուի յուլիսի 2-ին Բաստիլին տիրելով ժողովուրդը, անմիջապէս լուսկսց նրան կործանել, աւերել, որը չարունակ երեք տարի տևեց, որից ստացուած նիւթերը ծախելով, մաս մը միլիոն ֆրանկ դումար կազմուեց. Բաստիլի տեղում այժմ հրապարակ է, որ արձան է կանգնեցրած «ազատութեան համար կռուող քաղաքացիների» համար:

Հռչակաւոր Լաֆայէտը, որ Ամերիկայի ազատութեան համար իր խմբով գնաց Ամերիկայի անգլիացիների դէմ կռուելու, Բաստիլի բանալիները ուղարկեց Ամերիկայի ազատութեան հերոս Ուաշինգթոնին. Իսկ Բաստիլի քարերից և նրա մանրանկարներից մի մի հատ, որպէս յաւերժական յիշատակ, ուղարկուեց Ֆրանսիայի բոլոր քաղաքագլուխներին: Ահա մի երկու խօսքով Բաստիլի պատմութիւնը, որը սակայն արժանի է ուշադրութեան:

Ժամանակ է նամակս աւարտելու. արդէն 4½ ժամից աւելի է, որ չարունակ գրում եմ և աւտօմատի ժամը ուղիղ հինգն է: Պէտք է քնել:

Ն. Ս.

մասում, բայց դրանց գոյութիւնն անկասկածելի է։ Ռմխաձիզ և պահեստի գնդերի արագ զինումն արդէն ապահոված է. Նիւթական դրութիւնն առաջ էլ բաւարար դրութեան մէջ էր, այնպէս որ թիւրք զօրքերը միայն կազմակերպութեան կողմից են ետ մնում եւրոպական ամենալաւ զօրքերից։ Սակայն այդ թերութիւններն էլ նկատելի կերպով նուազում են։ Թիւրքական բանակը յարձակողական պատերազմի համար դեռ պատրաստ չէ, բայց անկասկած է, որ Թիւրքիան այժմ խիստ աջողութեամբ կարող է պաշտպանողական պատերազմ վարել, քան մի քանի տարի առաջ։ Ճշմարիտ է և այն, որ, եթէ Թիւրքիան միանալու լինի եռապետական դաշնակցութեան, նրա զօրքը վերջին տեղը չի բռնիլ նրանց զօրքերի շարքում։

ՖՐԱՆՍԻԱ.—«Soir» թերթի ստացած տեղեկութիւններին նայելով, գեներալ Բուլանժէն մտադիր է Լօնդօնից Նիւսօրկ ուղևորելու։

—Ֆրանսիայում կատարուող վերջին ընտրութիւնների միջոցին 813 ընտրուած նրանից 468-ը հասարակապետականներ են, իսկ 245-ը—պահպանողականներ։ Բուլանժէն 11 անգամ է ընտրուած։ Կրկնաքուէ պիտի լինի 89 տեղ։ Հասարակապետականները ձեռք են բերում 40 նոր տեղ, բայց կորցնում են 46 տեղ։

Յուլիսի 17-ի երեկոյեան բուլանժական թերթերի խմբագրութիւնների առաջ յուզումն էր նկատւում. սակայն ծանր անկարգութիւններ չեն եղել. մօտ 40 հոգի կալանաւորուած են։ Խուզարկել են «Presse» թերթի խմբագրութիւնն, ուր մի քանի նամակներ են բռնուած, և Պօլ-Լալեն փողոցում եղած մի քանի տպարաններն, ուր բուլանժական թերթեր են տպւում։

—Ֆրանսիական կառավարութիւնը խիստ ճնշումներ է բանեցրել ընտրութիւնների միջոցին։ Յուլիսի 16-ի երեկոյեան դաշտնի ոստիկանութեան 1500 անդամները չէջելիս են եղել Պարիզի փողոցներում։

ԲՕԼՂԱՐԻԱ.—«Narodny Listy»-ի Սօֆիայի թղթակիցը հաղորդում է, որ բօլղարական զօրքերը կեդրոնանում են մի կողմից Տերնի շրջակայքում, իսկ միւս կողմից Սիլիստրիայի և Վարնայի շրջակայքում։ Բացի այդ գաղտնապէս կատարում են զօրքերի դիւնումը։ Նոմխայի զօրքերին տեղափոխել են Վարնա, Պլոլովիվից՝ Սիլիստրիա, իսկ Սօֆիայի տեղապահ գունդը կանգնելու է Սերբիայի սահմանի վրայ՝ Տերն-Վլասինօի ուղղութեամբ։ Ներկայումս արդէն Սերբիայի սահմանի վրայ անհամեմատ աւելի զօրք է կանգնեցրած, քան առաջ։ Խնդ նպատակ ունէն իսկապէս Սօֆիայի կառավարիչներն՝ անյայտ է, բայց անկասկած է, դրան առիթ տուողը Սերբիայի երբորդ կարգի պահեստի զօրքերի դէնքի կոչումը չէ։

ՍԵՐԲԻԱ.—Սերբիայի նախկին թագաւոր Միլանը մինիստրների հետ անսակցելիս յայտարարել է, որ լրագիրների լուրերը, թէ ինքը մտադիր է կրկին իւր ձեռքն առնելու երկրի կառավարութեան դեկը, անհաւատ սուտ է։ Իսկապէս ինքն ուրախ է, որ միջոց ունէ հանգիստ վայելելու և խիստ զոհ է ներկայումս Սերբիայում տիրող օրինաւորի կարգ ու կանոնից, որի համար պէտք է չնորհակալ լինել Սերբիայի ներկայ կառավարութիւնից։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

*** Ներքին Ռնդարիայում յուլիսի 13-ին ոստիկ փոխ-որկի միջոցին ահագին վնասներ է ստացել ժողովուրդը։ Շատ գիւղեր կործանուել են, չատերը ապանուել են։ Մօտաւորապէս մի քանի զոհ-ականներ քանդուածքների և իրենց տակումն անելով սկզբնական, նրանց էլ կործանեցին։ Ինանուր գետի մէջ չատ մարդիկ խեղդուեցան։ Փոխ-որկիը մնծապէս վնասներ է հասցրել և Բուկովինայում։

***Նիւ-Եօրկի օդապնոց Կէմպբէլը երկար ժամանակ աշխատում էր օդապարիկի համար մի այնպիսի միջոց գտնել, որով հնար լինէր օդապարիկը կառավարել։ Մի քանի չաբաթ առաջ նա աւարտում է իւր օդապարիկի չինութիւնը և մի ուրիշ անձի հետ ձեռնարկում է իւր գործքի վրայ հրապարակաւ փորձեր անելու։ Օդապարիկը, որի մէջ նստած են լինում երկու օդագնացները, աջողութեամբ բարձրանում է վեր, բայց երբ որ Կէմպբէլը սկսում է գործադրել իւր ղեկի գործքը, նրա մի մասը պոկ է գալիս և ընկնում է վայր, որից յետոյ օդապարիկը գնում է դէպի ծով։ Այնուհետև ոչ մի տեղեկութիւն չէ ստացուել, ուստի վախնում են, որ երկու աղնուներն էլ վտանգի ենթարկուած լինին։

***Հումբերտ թագաւորը երկու հատ ձմեռաքոս մկնիկ է գնել, որի միջոցով ամեն օր խօսում է իւր ամուսնու՝ Մարգարիտ թագուհու հետ, որ Վիեննայումն է գտնւում։ Ձմեռաքոսները առանձին լրաբերների ձեռքով ուղարկւում են Հռոմից Վիեննայի։

ԵՐԵԿՈՅԵԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(«Հիւսիսային գործակալութեան»)

ՀՌՕՄ, 24 յուլիսի.—«Messaggero» թերթի ստացած տեղեկութիւններին նայելով, Ռուսիայում կաթոլիկ եկեղեցին կազմակերպելու վերաբերմամբ Վատիկանի ընկրսած բանակցութիւնները ռուսաց կառավարութեան հետ, մօտիկ ապագայում կաւարտեն։ Պապը հաւանութիւն ցոյց կտայ ռուսական թեմերի համար եօթ եպիսկոպոս նշանակելու մասին։

Խմբագիր-հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ։

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Կովկասի ճանապարհների հաղորդակցութեան վարչութեան ընդհանուր ժողովը նում, Թիֆլիսում, օգոստոսի 5-ին ածուղդ է նշանակուած կապալով տալու համար Ախալցխա-Ախալքալաքի ճանապարհի վրայ երեք փայտէ կամուրջների չինութիւնը՝ 4000 ր. գնահատուած, քարէ արմների չինութիւնը—2600 ր. և ուրիշ չինութիւններ 2900 ր. գնահատուած։ Մանրամասնութիւնները նոյն վարչութեան մէջ։

Սաւրօպօլի զինուորական հիւանդանոցի կոմիտէում օգոստոսի 10-ին ածուղդ է նշանակուած վայտէ նոր իրեր չինելու և ներկելու և հները նորոգելու և ներկելու կապալի համար։ Մանրամասնութիւնը Կովկասի ինանդանատային վարչութեան մէջ, նոյնպէս և յիշեալ հիւանդանոցի կոմիտէում։

Յուլիսի 27-ին, Թիֆլիսի նահանգական վարչութեան մէջ ածուղդ է նշանակուած կապալով տալու համար ռազմա-վիրահան տրախտի պատսպարին 13 չինքերի վերանորոգութիւնը՝ ընդամենը 32,050 ր. 47 կոպէկ գնահատուած։ Մանրամասնութիւնները նոյն վարչութեան մէջ։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅՈՒԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Բացառապէս հաշուապահութեան դասեր եմ տալիս հետևեալ սիստէմներով.—կրկնակի իտալական, եռակի ռուսական և անգլիական։

Դիմել Կազեննայա պալատ՝ Տէր-Յակովբեանին։ 5—1



ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Դ.-ՏՐ ՊՕՊՊԻ ԱՆԱՏԷՐԵԱՆ

ԱՏԱՄԻ ԷԼԷՔՍԻՐԸ

30 կոպ., 90 կ. և 1 ր. 20 կ. ամեն մի օրուայ, իսկ մեկնոյն ժամանակ գործադրելով նրա

ԱՏԱՄՆԱԳԻՆ ՓՈՇԻՆ՝ 50-ական կ., կամ ԱՆԱՏԷՐԻՆԵԱՆ ԱՏԱՄՆԱԳԻՆ ՊԱՍՏԸ՝ 1 ր. ապակեայ տուփով, կամ ԱՏԱՄՆԱԳԻՆ ԲՈՒՐԻՉ ՊԱՍՏԸ՝ 35 կ. կտորը։

Դ-ՏՐ ՊՕՊՊԻ ԱՐՕՏԱԳԻՆ ՕԾԱՒՈՒԶ

կտորը 50 կոպէկ

ամեն տեսակ մօրթի հեւանդութիւնների դէմ. չատ լաւ է լողանալու համար։

ԱՍՏՂԿԱՆ ՕԾԱՒՈՒԶ կտորը 60 կոպէկ։ ԱՐԵՒԱԾԱՂԿԱԳԻՆ կտորը 50 կոպէկ. ՄՕԻԱԳԻՆ ԱՐՕՒՈՂԱՐԻՒԹԱՐՁՐ ՇՐՋԱՆԻ ԿԱՆԱՆՑ ՕԾԱՒՈՒԶ

ՊՕՊՊԻ

Настоящее Глицериновое мыло „Кристалинъ“ по 35 коп. кусокъ.

"Транспорентъ" по 25 коп.

Содержатъ 40% чистаго глицерина.)

Աւստր. կայս. պալատական ատամնաբոյժ և մատակարար

Յ. Գ. ՊՕՊՊ ՎԵՆՆԱՅՈՒՄ

ԴԻՊՕՆ — ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ պեղատնային նեվթերի վաճառման կովկասեան ընկերութեան մէջ և Ա. Բօտտոմովի, Ա. Ա. Պօզովի և Վ. Դրվինակի պեղերի վաճառատուներում։

(Մ.) 24—16

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ գաւառներում «Ծովինար» գրքոյկս ստացող բարեմիտ անձանց շուտափոյթ վերադարձնել վաճառումից գոյացած գումարները, և մնացած գրքոյկները հետևեալ հասցէով, Чрезъ Бѣл. Ключь Шулаверы, уч. Камалянцъ Саркису.

Սարգիս Քամալեան
5—4



Անհրաժեշտ եմ համարում հրապարակաւ յայտնել իմ գիտութիւն ԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՒ ԱՆԴՐ-ԿՈՎԿԱՍԵԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԼԻ

ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻՆ,

որ դարձեալ սովորականի համեմատ ընդունում եմ յանձնարարական պայմանով վաճառելու ՋԱՆԱԶԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ, ՆԱԽԱՊԷՍ ՏԱԼՈՎ ԵՒ ԱԻԱՆՍ. նաև կատարում եմ տպրանքներ գնելու և ուղարկելու ՊԱՏՈՒԻՐՆԵՐ։

Յանկացողները պայմանների մասին կարող են դիմել ինձ այս հասցէով.—Одесса М. МУРАТОВУ, իսկ Թիֆլիսում տեղեկանալ Պ. Պ. «ԵՂԲ. ԾՈՎԵԱՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ.» ԲԱՆԿԱՅԻՆ ԳՐԱՍԵՆԵԱԿՈՒՄ։ 8—1

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԳՈՐԾԱԴԻՐ-ՄՆԱՑՈՒՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՑ Յ. ԻԶՄԻՐԵԱՆՑ ԿԱԱԿԻՆ

Ըստ կտակի բարեյիշատակ Յովսէփայ Իզմիրեանց՝ Գործադիր-Մնայուն Յանձնաժողովս պատիւ ունի հրաւիրել այն հեղինակներն ու բանաստեղծներն՝ որ Ազգային Դպրոցների և Պատմութեան վերաբերեալ ո՛ և է աշխատութեամբ կը փափագին մասնակցել Սահակ-Մեսրոպեան գրական մրցանակաբաշխութեան, հաճին իրենց աշխատութիւնները յուղարկել մինչև յառաջիկայ 1890 տարւոյ յունվարի վերջ առ Սմեն. Սրբազան Պատրիարք Հայրն, Յանձնաժողովոյս Հասցէին, ի Պատրիարքարանի Հայոց, Կ. Պոլիս։

Թիւ 76

1 Յուլիս 1889
Ի Պատրիարքարանի Հայոց
Կ. Պոլիս.

(Կնիք պատրիարքարանի)

10—3

ՇԵՐԱՄԻ ՍԵՐՄԻ ՔՆՆՈՒԹԻՒՆ

Այն անձինք, որոնք ցանկանում են
ՔՆՆԵԼ ՏԱԼ ԻՐԵՆՑ ՇԵՐԱՄԻ ՍԵՐՄԸ

Թող բարեհաճեն վաղօրօք յայտնել մեզ իրենց ցանկութիւնը և քննելի թիթեռների քանակութիւնը։

ՄԵՐ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ԵՆ.—1000-3000 թիթեռի քննութիւնը հատը 1½ կոպէկ. իսկ 3000-ից աւելին- հատը 1 կոպէկ։

Հասցէ—Тифлисъ. Грязная улица, д. № 27, Константину г. Меликъ-Шахназарянцъ.

25—15

ԿԱՆԱՆՑ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Կ Ա Մ

ԲԱՐՈՅԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՁԿԱՆԱՆՑ

Սոյն գիրքը, որ Ֆրանսիական ակադեմիայի անդամ և անուանի հեղինակ Էրնեստ Լէգուվէի երկասիրութիւններից առաջինն է, թէ Ֆրանսիայի և թէ արևմտեան Եւրոպայի մէջ մեծ հռչակ է հանած։ Բարեյիշատակ Հանգուցեալ տիկին Թագուհի Մելիք Ազարեանցը թարգմանել է սրան հայերէն լեզուով, իսկ նրա ամուսին պ. Աղէքսանդր Մելիք Ազարեանցի հրատարակութեամբ տպագրուած է այսօր։

Իրքի սկզբում գրուած է վաղամեռիկ տիկնոջ որդեկոչոյս հօր —Ծերենցի յառաջաբանը, իսկ գրքի ճակատին—թարգմանչուհու գեղարուեստական լուսանկարը։ Գիրքը բաղկացած է 500 երեսից, մանրատառ մաքուր տպագրութիւն, և արժէ՝ Պօլիս 15 դահեկան, Թիֆլիս 1 ր. 50 կոպ. ճանապարհի ծախքով հանդերձ։

Վաճառւում է Կենդրոնական գրավաճառանոցում։

5—4

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ԵՒ ՎԱՃԱՌՈՒՄ Է

ՊԵՐՃ ՊՈՕՇԵԱՆՑԻ ՑԵՑԵՐ

Վ Ի Պ

Գինն է մ բու-բլի.

Կարելի է ստանալ հեղինակից՝ Тифлисъ, Армянская Семинарія, Перчъ Проппянцу.

(Ս.) 25—11

Дозволено цензурою. г. Тифлисъ, 24-го Іюля 1889 г. Տպարան Կաւկազ լրագրի գրասենեակի Типографія конторы газеты Кавказъ, Гол. пр., д. Читахова